ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ
էլհասցե՝ anahit.muradyan.1966@mail.ru

ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ամփոփում

Աշխատանքում, ամփոփելով բայական հիմքերով կազմված բաղադրությունների բառակազմական կաղապարների ուսումնասիրության արդյունքները, կարելի է փաստել, որ բայական հիմքերը բավական ճկուն բառակազմական հնարավորություններ ունեն, և նրանցով կազմված նոր գոյականներն ու ածականները մեծապես հարստացնում են հայոց լեզվի բառային կազմը: ՈՒսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենի բառակազմությանը մասնակցող հիմքերի զգալի մասը գրաբարյան ժառանգություն է: Բայական հիմքերի ձևաբանական կաղապարների մեջ առավել կենսունակ են **Գ + Բ, Ա + Բ, Մ + Բ** կաղապարները[1]: Այս կաղապարներով կազմված բարդ բառերը շարահյուսական հարաբերությունների տեսակետից արտահայտում են ենթակայի ու ստորոգյալի, որոշիչ-որոշյալի,հատկացուցիչ-հատկացյալի, խնդրային և պարագայական իմաստներ:

Բանալի բառեր և արտահայտություններ. ածական, բայահիմք, գոյական, բարդություն, կաղապար:

Ներածություն

Լեզվի զարգացման արդի փուլում բայական գերադաս բաղադրիչով կազմված համադրական բարդությունները մեծ տեղ են գրավում ժամանակակից հայերենի բառային կազմում: Վերոհիշյալ բարդություն-ները կազմվում են ստորադաս բաղադրիչներ ունեցող համարյա բոլոր կաղապարներով, *կարող են լինել երկբաղադրիչ,եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ:* Ընդ որում նրանցում հիմնական իմաստի կրողը վերջին

[1] Անուն խոսքի մասերի և բայի զուգորդումից ստացած բարդությունների առանձնահատկությունների քննությանն անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում (Տե՛ս, Ա. Մուրադյան, Բայական հիմքերով բարդությունները ժամանակակից հայերենում, Ե.,2014 ,Գիտական տեղեկագիր, էջ 93):

բաղադրիչն է, որը հանդես է գալիս երկու ձևով՝ բայարմատով կամ բայահիմքով:

Ըստ Հ.Աճառյանի՝ հայերենը «թեև շատ հարուստ է բարդությանց կողմից, բայց պահում է չափավորություն», որը նշանակում է, որ երկուսից ավելի բաղադրիչներով բարդ բառերը սակավաթիվ են: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ հայերենի բարդությունների համար բնական է երկու բաղադրիչներից կազմված լինելը[2]:

Նշենք, որ այնուամենայնիվ, եռաբաղադրիչ բարդությունները ևս հանգում են երկբաղադրիչ կազմությունների, քանի որ բառի մեջ ամեն դեպքում առանձնանում են երկու հիմքեր: Օրինակ՝ ջրաժամացույց-ջր+ա+ժամացույց

Փաստերը ցույց են տալիս, որ բայական գերադաս բաղադրիչները կենսունակ չեն գոյականներ կազմելիս, քանի որ այդպիսի կառուցվածք ունեցող բարդ բառերի մեծ մասն արտահայտում է հատկանշային հարաբերություն:

Ներկա հոդվածում ներկայացնում ենք բայական հիմքերով բարդությունների կազմության եղանակները, հիմքերի տեսակները, դրանց տարբերակային ձևերը, ձևաբանական կաղապարները, բաղադրիչների շարահյուսական և հոլովական հարաբերությունները: Բարդության մեջ սերող և բաղադրող հիմքերի առանձնացման հարցում մենք առաջնորդվում ենք Է.Աղայանի մոտեցմամբ. «բարդ բառերի վերջին բաղադրական հիմքը սովորաբար բաղադրող հիմքն է, իսկ դրան նախորդող հիմքը՝ սերող»[3]:

Մեթոդաբանություն

Աշխատանքը կատարված է լեզվաբանական հետազոտության համաժամանակյա, այն է՝ նկարագրական մեթոդի արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներով:

* * *

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից բարդությունների կազմության ժամանակ բայական բաղադրիչն ավելի

---

[2] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների,հ .3, Ե., 1957, էջ 141: Այս մասին տե՛ս
Գ. Բ. Ջահուկյան, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե.,1989, էջ 214: Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 3:

[3] Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն,Ե., 1984, էջ 248:

շատ հանդիպում է բաղադրող հիմքի դերում: Սա բացատրվում է նրանով, որ բուն կամ իսկական բարդության գերադաս անդամը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը՝ նրա լրացումը:

Ստորև ներկայացնում ենք այն խոսքի մասերի ձևաբանական կաղապարները, որոնց կազմությանը մասնակցում են բայական բաղադրիչներ:[4]

1. Գ+Բ

կաղապարի բաղադրիչների զուգադրման արդյունքում ստեղծվող նոր բառերը կարող են լինել և՛ գոյականներ, և՛ ածականներ: Այստեղ բարդության հիմնական իմաստն արտահայտում է բայարմատը, իսկ գոյական բաղադրիչը՝ տարբեր իմաստներով ու հարաբերություններով, լրացնում է նրան: «Բարդության ներսում,- գրում է Ս. Էլոյանը է,- գոյականով ու բայարմատով (բայահիմքով) բաղադրված բաղադրիչներն իմաստային առումով ունեն այնպիսի փոխհարաբերություններ, ինչպիսին ունի բայը կամ ստորոգյալը իր լրացումների ու ենթակայի հետ»[5] :

Այս կաղապարով գոյական բարդություններ են կազմվում ինչպես հոդակապով՝ ***աստղագուշակ, արևակեզ, ատամնաբույժ, ակնաբույժ, ականանետ, բանասեր, բանաստեղծ, բաժակակալ, դասախոս, գրավաճառ, երկրաշարժ, հարկահան, հարկատու, լարախաղաց, լրաբեր, ձկնակեր,*** և այլն, այնպես էլ առանց հոդակապի՝ ***խրատասաց, կայծհան, հավկիթ, հյուրընկալ, ձկնորս, ունկնդիր*** և այլն:

Ի դեպ՝ այս կաղապարով ավելի շատ կազմվում են ածականներ: Վերջիններիս գերակշռությունը բացատրվում է բայարմատի արտահայտած գործողության ընդհանուր հատկանիշներով՝ ***ազգադավ, ազգահալած, արյունախում, երազատաս, նեռադավան, թելատու, ծաղկահյուս, կարգապահ, կաշառակեր, հյուրասեր, մարդատար, մարդասեր, մեղսագործ*** , ***պատվաբեր, սրտաբուխ, սերմնազուրկ*** և այլն:

2. Ա+Բ կաղապարով ժամանակակից հայերենում հիմնականում կազմվում են ածականներ՝ ***դատարկախոս, երկարակյաց, թեթևասահ, կարճատև, հանդարտածուփ, հումակեր, մեծածախ, նրբահյուս, նորադավան, սակավակյաց, քաղցրաբուխ*** և այլն: Հանդիպում են նաև գոյականներ՝ ***բարեխոս, բարձրախոս, բարեկամ, հնավաճառ, ստախոս, ուղղաթիռ*** և այլն, որոնք միաժամանակ կարող են գործածվել որպես ածականներ:

---

[4] Խոսքի մասերը նշվում են հետևյալ ձևով՝ **գ** (գոյական), **ա** (ածական), **բ** (բայ), **մ** (մակբայ), իսկ հոդակապը՝ **+** նշանով:

[5] Ս. Էլոյանը,Ածանցները ժամանակակից հայերենում,Ե.,1963, էջ 333 :

3. **Մ + Բ** կաղապարով բացառապես ստացվում են ածականներ, քանի որ կառույցը պարունակում է հատկանշային իմաստ՝ **առատաբուխ**, ***արագահոս, արագավազ, արագընթաց, հանկարծածին, հարատև, հավերժաբուխ, մշտածածան, վաղահաս, վաղամեռ, վերընթաց*** և այլն, սակայն հանդիպում են նաև գոյականներ՝ ***առաջընթաց, առաջնեկ, հեռադետ, հեռախոս, հեռաչափ*** և այլն:

Ուշագրավ են **թվական, դերանուն + բայական բաղադրիչ** կաղապարները: Նշված խոսքի մասերը բառակազմությանը քիչ են մասնակցում և իսկական բարդության կառուցվածքում հանդես են գալիս միայն որպես առաջին բաղադրիչներ:

4. Դերանուններից բառակազմության տեսակետից շատ կենսունակ է ***ինքը*** դերանունը, օրինակ՝ ***ինքնաբավ, ինքնաբույժ, ինքնագնաց, ինքնաբուխ, ինքնաեռ, ինքնաթիռ, ինքնաթափ, ինքնածին, ինքնահոս, ինքնամեծար, ինքնասեր, ինքնաստեղծ, ինքնասույզ, ինքնամոռաց*** և այլն:

Պարզ երևում է, որ ***ինքը*** դերանունը երրորդ դեմքի իմաստ չի արտահայտում, այլ՝ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության ինքնին կատարվելը, ինչպես՝ **ինքնաթիռ = (*ինքնիրեն թռչող*), ինքնահոս = (*ինքնիրեն հոսող*)** և այլն:

Ըստ Հ. Բարսեղյանի բառարանի տվյալների՝ նման կազմություն-ների թիվը ածանցների հետ շուրջ 650 է[6], որոնք կա՛մ ածական-ներ են, կա՛մ գոյականներ:

Բառակազմական դրսևորումներով ***ինքն*** դերանունից քիչ է տարբերվում ***յուր*** դերանունը, որը, սակայն, արդի բառակազմության մեջ այլևս կենսունակ չէ: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ***յուր + բայահիմք*** կաղապարով հանդիպել է 9 օրինակ, որոնք բոլորն էլ ածականներն են՝ ***յուրաբնակ, յուրադիր, յուրածին, յուրակերտ, յուրահնար, յուրահոգ, յուրաշարժ, յուրաշեն, յուրաստեղծ***[7]:

Մյուս դերանուններով ***(ողջ, ամեն, բոլոր, այլ, ես)*** կազմությունները քանակով զիջում են վեր նշվածներին, թեև այստեղ էլ **Դ + Բ** զուգորդումից հիմնականում ստացվում են ածականներ՝ ***այլադավան, այլածին, այլամերժ, այլասեր, ամենագնաց, ամենագրավ, ամենակուլ, ամենատես, բոլորանվեր, բոլորակերտ, բոլորաշեն, եսասեր, եսապաշտ, իրարամերժ, ողջանվեր***, ***ողջախոհ, ողջակեզ*** և այլն:

---

[6] Հ. Խ. Բարսեղյան,Հայերենի ուղղագրական, ուղղախոսական,տեմինաբանական բառարան, Ե.,1973, էջ 978:

[7] Էդ. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան,Ե.,1976, էջ 1043:

5. **Թ + Բ** կազմություններում որպես առաջին բաղադրիչ հանդես են գալիս բոլոր թվականները. գերակշռում են մեկից ինը թվականներով բարդությունները, օր.՝ ***եռաբաժան***, ***եռահյուս***, **եռածալ, եռաշար, եռապտույտ, *հնգասեր, հազարագետ,հազարախոս, միահավան, միագոչ, միախոս, միածին*** և այլն:

Իրենց քանակային դրսևորումներով զգալիորեն զիջում են այն կաղապարները, որոնցում բայահիմքը հանդես է գալիս որպես գերադաս բաղադրիչ: Այսպես՝

1. **Բ + Գ** կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ, որոնք բառակա-պակցության վերածելիս՝ անորոշ դերբայի սեռական հոլովաձևի իմաստ են ստանում, օր.՝ ***անցագիր, գրասեղան, դիտակայան, ելակետ, զսպաշապիկ, ընտրարշավ, խաղառաջ, պարասրահ, մրցահրավեր, քննաշրջան, փոխադրավարձ*** և այլն,

2. **Բ + Ա** կաղապարով շատ քիչ բարդություններ են կազմվում, այն էլ միայն ածականներ: Գերակշռում են ***-կից*** արմատական և ***-ուն (ակ)*** ածանցավոր բաղադրիչներով կազմությունները, թեև կան նաև այլ հիմքերով ածականներ՝ ***ընկալունակ, հարգարժան, մարտունակ, շարժակից, պաշտպանունակ, տեսարժան*** և այլն: Հանդի-պում են նաև գոյականներ՝ ***գործազուրկ, գործակից, մրցակից*** և այլն:

Ինչ վերաբերում է **դերբայական սերող հիմք + բաղադրող հիմք** կաղապարին, ապա պետք է նշել, որ ժամանակակից հայերենում այս կառույցով համադրական բարդությունների բառակազմությանն անկախ դերբայներից մասնակցում են անորոշը, ենթակայականը և հարակատարը, որոնք կազմում են անվանական խոսքի մասեր: Այս կազմությունների սերող հիմքում գործածության հաճախականություն ունեն ***-գրել, -գործել, -խոսել, - մտածել, -նստել, -վարել, -ուտել*** դերբայները, որոնց հետ բաղադրող հիմքում հաճախակի հանդես են գալիս ***-ձև, -նյութ, - ոճ, - տեղ, - ցավ*** և այլ հիմքերը՝ ***գրելաձև, գրելաթուղթ, գրելառաջ, գործելաշրջան, խոսելակերպ, խոսելաձև, խոսելացավ, մտածելակերպ, մտածելաձև, նստելաձև, նստելավարձ, նստելատեղ, պատմելաձև, պատմելառաջ, վառելանյութ, վարվելաձև*** և այլն:

Վերը բերված օրինակներից ակնհայտ է, որ անորոշ դերբայը, հանդես գալով սեռական հոլովի նշանակությամբ, բաղադրություններում դրսևորվում է մե՛րթ ***գոյականի***, եթե բաղադրող հիմքը գոյական է ***(գրելաձև - գրելու ձև, վարելահող-վարելու հող,)***, մե՛րթ ***բայի*** նշանակությամբ՝ դառնալով խնդրային լրացում, եթե բաղադրող հիմքը

բայական է *(զբոսասեր - զբոսնել սիրող, զրուցասեր - զրուցել սիրող, իշխելասեր – իշխել սիրող)* և այլն [8]:

Իսկ ենթակայական դերբայը բառակազմական կաղապարներում հանդես է գալիս երկակի կիրառությամբ՝

Ա. որպես բուն կամ իսկական բարդության սերող հիմք, օր.՝ ***արարողակարգ, քերթողահայր, ծնողասեր, ծնողասպան, ծնողապաշտ*** և այլն,

Բ. որպես բուն կամ իսկական բարդության բաղադրող հիմք. ընդ որում այս կաղապարի բառերը կարելի է բաժանել երկու խմբի՝ բառեր, որոնք առաջացել են բառակապակցություններից՝ ***հեռուստա-դիտող, ռադիոլսող, ռադիոսիրող, կինոդիտող, իրավախախտող, լրագրող,*** և բառեր, որոնք առաջացել են անորոշ դերբայից՝ ***արդյունաբերող, արդյունահանող, գծագրող, մեքենագրող, մեղադրող, աղագրող, ուսումնասիրող*** և այլն: Ինչպես երևում է օրինակներից ենթակայական դերբայով արտահայտված հիմքերն անվանական նշանակություն ունեն:

Ենթակայական դերբայի պես երկակի կիրառություններ ունի նաև հարակատարը, որի վերջավորությունը՝ ***-ած*** ածանցը, բայերից կազմում է բազմաթիվ ձևեր՝ ինչպես գործողության հետ կապված հատկանիշի, այնպես էլ անցյալ դերբայի նշանակությամբ[9]: Օրինակ՝ ***գետնատարած, երկփեղկված, լիաբեռնված, ծանրաբեռնված, շահագրգռված:***

Հարկ է նշել, որ եթե բայական բաղադրիչը սերող հիմքում հանդես է գալիս բայահիմքի և դերբայական հիմքի ձևով, ապա բաղադրող հիմքում երևան է հանում տիպաբանական բազմազան տարբերակներ[10], որոնց մեջ կարելի է առանձնացնել

1. մաքուր բայարմատով կազմված, որը համընկնում է պարզ բայերի ներկայի հիմքին՝ ***աստվածապաշտ, բանախոս, հերարձակ, հողակերտ, քարակոփ*** և այլն,

2. գրաբարի պատճառական բայերի երկրորդ հիմքին համընկնող՝ ***ամպահարույց, կիսակա- ռույց, վարձահատույց, խելակորույս, որդեկորույս, մատնացույց, ինքնուսույց*** և այլն,

---

[8] Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ103:

[9] Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ194:

[10] Նույն տեղում, էջ251:

3. անցյալ կատարյալի հիմքին համընկնող՝ ***ազգուրաց, անձնամոռաց, ալրաղաց, բանիմաց, հեռասլաց, խրատասաց, նրբազգաց*** և այլն,

4.բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքին համընկնող հիմքերի տեսակները: Առավել գործածական են **դիր** և **տուր** հիմքերը՝ ***ուսադիր, որմնադիր, օրենադիր, բնատուր, անձնատուր և այլն:***

Հաճախ բառաբարդման կամ ածանցման դեպքում, երբ բայական բաղադրիչը հանդես է գալիս բարդության բաղադրող հիմքում, բայական հիմքերում առաջանում են հնչյունափոխական երևույթները: Օրինակ՝ ***ի > ը, ի > զրո, ույ > ու, (ե) > ի, ու > ը, ու> վ*** և այլն:[11]

Վերջապես, երբ բարդության բաղադրող հիմքն արտահայտվում է բայարմատով կամ բայահիմքով, նման բարդությունները բառակապակցությունների վերածելիս առաջին բաղադրիչը ստանում է զանազան հոլովական իմաստներ.

Ուղղական - հայցականի նշանակությամբ՝ ***ալրաղաց, խրատասաց, հարկատու, հուսահատ, սրտատրոփ, սրտամեռ, տնաքանդ, սանձարձակ, ուժասպառ*** և այլն:

Սեռական - տրականի նշանակությամբ՝ *բուն սեռական՝* ***արքայանիստ, դիմաշարժ, տրական՝ կենտրոնամետ, երկնահուպ, չափահաս*** և այլն:

Բացառականի նշանակությամբ՝ ***հողմածեծ, ձայնազուրկ, սրտաբուխ, լեռնահոս, հողածին, մտահան, պաշտոնազուրկ*** և այլն:

Գործիականի նշանակությամբ՝ ***ամպասքող, ասֆալտապատ, զրահապատ, կավածեփ, մառախլապատ, գորգածածկ, մեքենագիր, ծաղկազարդ, ոսկեզօծ*** և այլն:

Ներգոյականի նշանակությամբ՝ ***գինեասույզ, ամրոցաբնակ, մտասույզ, լեռնաբնակ, մոխրաթավալ, խավարաբնակ*** և այլն:

Հոլովման հարացույցի իմաստային բազմազանության հետ միասին բայականանհիմքերով բարդությունների բաղադրիչներն աչքի են ընկնում նաև շարահյուսական հարաբերությունների բազմազանությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում բավականին տարածված **գոյական** (մասամբ նաև այլ խոսքի մասերով) **+ բայահիմք** կաղապարով կազմված բարդ բառերը շարահյուսական կապակցության վերածվելիս արտահայտում են՝

[11] Ա.Մուրադյան, Բայական հիմքերով բարդությունները ժամանակակից հայերենում, Գիտական տեղեկագիր, Ե., 2014 , էջ 94:

ա) ենթակայի ու ստորոգյալի՝ ***այգաբաց, արևածագ, արյունականգ, բուժայց, ձնհալ, գլխապտույտ, ամառնամուտ,***

բ) որոշիչ-որոշյալի՝ ***ապրելակերպ, գրելառձ, գրատախտակ, դիտակետ խոսելաձև, վառելանյութ, վառելափայտ, զսպաշապիկ, քնապարկ, ննջատոպրակ, նստելատեղ, սպասելավարձ, ճեմասրահ, հավաքատեղի***: Վերոհիշյալ կաղապարով բարդություններ են կազմվում բացառապես **անորոշ դերբայ + գոյական** զուգորդումից, որը պարզորոշ երևում է բարդությունները բառակապակցության վերածելիս, օր.՝ ***քնելու պարկ, գրելու տախտակ, նստելու տեղ*** և այլն:

գ)*հատկացուցիչ-հատկացյալի՝* ***արևադարձ, կրծքահեղձուկ, սրտխառնուք, երկրաշարժ*** *և այլն:*

դ) խնդրային և պարագայական հարաբերություններ:

Խնդրային հարաբերությունների մեջ կարելի է առանձնացնել բազմաթիվ իմաստային խմբեր.

ա. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները սննդամթերքի անուններ կամ առարկաներ են՝ ***գինեվաճառ, մսավաճառ, տոմսավաճառ, փայտահատ*** և այլն:

բ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները զանազան կենդանիների անուններ են՝
անասնապահ, կովկիթ, տավարարած, մեղվապահ, շերամաբույծ և այլ:

գ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները երկնային մարմինների անուններ են՝ ***ամպացիր, արևաչափ, լուսնագնաց, տիեզերագնաց*** *և այլն:*

դ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչներն արվեստի տարբեր բնագավառների հետ կապված հասկացություններ են՝ ***դուդուկահար, երգասաց, թատրոնասեր, դաշնակահար, տաղասաց, տաղերգու, դերակատար*** և այլն:

Նկատելի է, որ վերոնշյալ բարդությունների ցանկում զգալի թիվ են կազմում ուղիղխնդրային հարաբերություն արտահայտող բառերը, օր.՝ ***բեռնատար, բայակերտ, գրաշար, կենսագիր, մարդասպան, մսակեր, ժամանակացույց, քարտաշ*** և այլն:

Այս իմաստային խմբի բարդությունները կարելի է բաժանել երեք հիմնական տեսակի՝

1. բարդություններ, որոնք արտահայտում են՝

ա. գործողություն կատարող անձի իմաստ՝ ***մորթապաշտ, անտառապահ, ակնաբույժ, վիրաբույժ, ջահակիր, պատմագիր, տառաստեղծ, լարախաղաց, փայտահատ և այլն,***

բ. գործողություն կատարող առարկայի, գործիքի, մեքենայի իմաստ, օր.՝ ***մարդատար, փոշեկուլ, ջրցան, կողմնացույց, ջերմաչափ, աղբատար, ցորենաքաղ, սերմնացան*** *և այլն,*

2. բարդություններ, որոնց

ա. առաջին բաղադրիչով արտահայտված առարկան կամ անձն անմիջապես ենթարկվում է տվյալ գործողության ազդեցությանը՝ ***մարդասպան, մսաակեր, հրացան, ձկնորս, քարտաշ, տնաքանդ*** *և այլն,*

բ. առաջին բաղադրիչով նշված առարկան բայարմատով արտահայտված գործողության արդյունքն է՝ ***արյունաստեղծ, բայակերտ, կտակագիր, գրաշար, կենսագիր,*** *և այլն,*

գ. գործողության օբյեկտ հանդիսացող առարկան ֆիզիկապես ենթարկվում է տվյալ գործողությանը՝ ***բեռնատար, բանբեր, ավետաբեր, ժամանակացույց, հոգատար*** *և այլն,*

3. գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդություններ, որոնք էլ կարելի է բաժանել հետևյալ կերպ.

ա) ընթացքի մեջ գտնվող գործողությունն իբրև հատկանիշ ներկայացնող բարդություններ՝ ***բեռնատար, օրենսդիր, սարսափազդու*** *և այլն,*

բ) գործողության հետևանքն իբրև հատկանիշ ներկայացնող բարդություններ՝ ***հերարձակ, տերևաթափ, ուժասպառ, էլեկտրավառ, որձակտոր*** *և այլն:*

Հանգման, միջոցի, անջատման խնդրի հարաբերություններ ունեցող բարդություններն արտահայտում են առարկաների, անձերի հատկանիշներ և կազմում են հիմնականում ածականներ. դրանց մի մասը վերածվել է գոյականի: Բարդության մեջ սերող հիմքի գոյական բաղադրիչն արտահայտում է.

- տրական հոլովի իմաստ (հանգման խնդիր)՝ ***ազգադավ, ամպահույզ, երկնահույզ, երկնահաս, հայրենանվեր, վանքապատկան*** և այլն:
- բացառական հոլովի իմաստ (անջատման խնդիր)՝ ***ականագերծ, աթոռազուրկ, ամպրոպածին, հողածին, պաշտոնանկ, տերևազուրկ, տեղահան, սրտաբուխ*** և այլն:
- գործիական հոլովաձևի իմաստ (միջոցի խնդիր)՝ ***աղբածածկ, անտառապատ, աղապատ, ասֆալտապատ, գորգածածկ, զարդանախշ, կղմինդրածածկ, մշուշապատ, մեքենագիր, նկարազարդ, պարսպապատ, սիրակառույց*** և այլն:

Պարագայական հարաբերությունների մեջ առանձնացվում է՝

ա. **պատճառի պարագայական հարաբերությունը՝** մարդու հոգեկան ու մտավոր գործունեությանը վերաբերող հատկանիշների առատությամբ, օր.՝ ***ամոթահար, մտավախ, սիրակեզ, վշտաբեկ,***

բ. գործածականության հաճախականությամբ՝ **տեղի պարագայական հարաբերությունը**. վերջինիս իմաստները կարող են դրսևորվել զանազան հոլովներով, օր.՝

հայցական՝ ***տիեզերագնաց, երկնասլաց, ծովագնաց*** **և այլն,**

տրական՝ ***վիմագիր, ճակատագիր, գետնատարած*** **և այլն,**

ներգոյական՝ ***ջրասույզ, հայաստանաբնակ, ձյունաթավալ, ցեխա-թաթախ*** և այլն,

գ. կառուցվածքային առանձնահատկություններով՝ **ժամանակի պարագայական հարաբերությունը,** քանի որ այս կառուցվածքի բուն կամ իսկական բարդությունների մեծ մասը փոխանվանաբար ածականներից անցել է գոյականների համակարգը՝ ***աշնանացան, գիշերապահ, գիշերածին, իրիկնապահ*** և այլն:

Հարկ է նշել, որ շատ դեպքերում բարդությունների շարահյուսական հարաբերությունները որոշելը բավական դժվար է, և հաճախ դրանք որոշվում են՝ նկատի ունենալով բարդության առավել ընդունելի և առավել բնորոշ շարահյուսական հարաբերությունը:

Եզրակացություն

Ամփոփելով բայական հիմքերով կազմված բաղադրությունների բառակազմական կաղապարների ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել, որ բայական հիմքերը բավական ճկուն բառակազմական հնարավորություններ ունեն, և նրանցով կազմված նոր գոյականներն ու ածականները մեծապես հարստացնում են հայոց լեզվի բառային կազմը:

Анаит Мурадян

Модели сочетаний глагольных основ в современном армянском языке

Заключение

Ключевые слова и выражения: прилогательное,глагольная основа, существутельное, сложения, модель,

Таким образом, обобщая результаты изучения составов словообразовательных моделей, составленных глагольными основами, можно констатировать факт, что глагольные основы имеют довольно гибкие словообразовательные возможности при составлении сложных слов и образуемые ими новые существительные и прилагательные весьма обогащают словарный запас армянского языка. По результатам исследований

значительная часть основ, участвовавших в словообразовании современного армянского языка наследована нам от древнеармянского (грабара). Что же касается глагольных основ тех морфологических компонентов, в которых глагольная основа является производной, то следует отметить, что глагольная основа в большинстве случаев представляет собой составную основу, поскольку глаголы в редких случаях служат дополнением для других частей речи. В армянском языке имеются также сложные слова, первым компонентом которых являются глагольная основа либо причастие.Модели существительное+глагол, прилагательное + глагол, наречие + глагол, глагол + существительное преимущественно продуктивны в морфологических моделях глагольных основ. Сложения, составленные этими моделями, при трансформации в синтаскическое сочетание могут выражать выражают подлежащие и сказуемые, атрибутивно-определенные, объектные и обстоятельственные отношения.

В объектных отношениях можно выделить множество семантических групп.

а. Составные слова, первыми компонентами которых являются названия продуктов или предметов: винодел, мясник, продавец дровосек и т. д.

б. Составные слова, первыми компонентами которых являются наименования различных животных: пастух, коровник, скотовод, пасечник и другие.

в. Составные слова , первыми составляющими которых являются названия небесных тел: солнцемер, луноход, космонавт и т. д.

д. Осложнения, первыми составляющими которых являются понятия, относящиеся к разным областям искусства: дудукист, певец, театрал, пианист, певец, актер и др.

Из обстоятельственных отношениях продуктивны отношения причины и места: значения последних могут быть выражены различными наклонениами.

Anahit Muradyan

Models of verbal stems combinations in modern armenian language

Conclusion

Key words and expressions: adjective, verbal stem, noun, complication, pattern.

Consequently, while summarizing the effects of study of compositions word-building patterns, formed by verbal stems, one can state that the verbal stems have quite flexible word-building opportunities for formation of compound

words and the new nouns and adjectives formed by them considerably enrich the word-stock of the Armenian language.As research showed the considerable part of stems, taking part in the word-building of the modern Armenian language were inherited to us from the ancient Armenian language (grabar). As for the verb stems of those morphological components in which the verb stem is a derivative, then It should be noted that the verb stem in most cases isa compound stem, since verbs in rare cases serve as a complement to other parts of speech. There are also compound words in the Armenian language, the first component which are the verb stem or participle . The models noun+verb, adjective+verb, adverb+verb, verb+noun are predominantly effective in the morphological models of the verbal stems. Compositions formed by these models in the process of transformation into syntactical combination can express subject and predicate, attributive-definite, object and circumstantial relations. In objective relations, many semantic groups can be distinguished.

a. Compound words, the first components of which are the names of products or objects: winemaker, butcher, lumberjack seller, etc.

b. Compound words, the first components of which are the names of various animals: shepherd, cowshed, cattle breeder, beekeeper and others.

c. Compound words, the first components of which are the names of celestial bodies: sunmeter, lunar rover, astronaut, etc.

d. Complications, the first components of which are concepts related to different areas of art: duduk player, singer, theater-goer, pianist, singer, actor, etc.

Օգտագործված գրականություն

1. Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում,հ,Ե.,1962:
2. Ս. Ա. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.,1956, 351 էջ:
3. Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.,1953:
4. Էդ. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., հ.1, «Հայաստան» հրատ., 1976, 929 էջ:
5. Էդ. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե.,Եր.համալս. հրատ., 1984, 370 էջ:
6. Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, 250 էջ:
7. Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973 :

8. Ս. Ա. Գալստյան, Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք, Բանբեր Երևանի համալսարանի, 1(124), Ե., 2008, 99 էջ:
9. Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., Եր.համալս. հրատ. , 1978, 324 էջ:
10. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:
11. Ա. Ժ. Մուրադյան,Բայական հիմքերով բաղադրությունները ժամանակակից հայերենում,ԳՏ, հ.1,Գ., 2014, 93 էջ:
12. Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ.1982, 440 էջ:
13. Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

Խմբագրություն է ուղարկվել 01.11.2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 16.11.2022թ.
Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.